— Ցանուն Աղդ. եկեղ. Հոդաբարձութեան Թրոյ քաղաքի Ամերիկայի ընդ սրում յղեցաւ խաչ մի ձեռաց վանն եկեղեցւոյ տեղւոյն։ Թ. 235.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Փետրվար 1-ի օրագրութեամբ Սինոդը որոշեց մերժել Կոռնձոր գիւղի (Տաթևու վիճ.) նախկին քահանայ Գրիգոր Տէր Սողոմոնեանի և նոյն գիւղի ժողովրդականաց խնդիրը Տէր Սողոմոնեանին քահանայական կարգը վերադարձնելու մասին։

Փետրվար 3-ի օրագրով, ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի, Սինոդը կարգեց վանահայր Ճալէթու Տ. Սահակ վարդապետ Բաղդասարեանցին։

Նոյն օրը Սինոդը որոշեց ազդարարել վանքապատկան գիւղերի (Վաղարշապատի, Օշականի, Եղուարդի, Մաստարի և Մողնու) ժողովրդականաց, որ այն անձինք, որոնք ժառանգութիւն են ստացել, կամ որոնց Սինոդը յատկացրել է տնատեղի և այգեատեղի և նրանք վաճառել են ուրիշներին և կամ կվաճառեն, այդպիսիներին ու նրանց ժառանգներին նոր տնատեղի և այգեատեղի չի տրուիլ։

Փետրվարի 6-ին Սինոդը որոշեց ապացուցուած համարել Քրիստափոր Լեոնիկեանի պոռնկութիւնը, լուծել նրա պսակը Մարիամ Վարդանեանի հետ վերջնիս արտօնելով նոր ամուսնութիւն մտնել։

Նոյն օրը Սինոդը որոշեց ապացուցուած համարել Նունէ Փրիդոնեան Ազիզեանցի պոռնկութիւնը և լուծելով նրա պսակը Սիրական Ազիզեանի հետ, թոյլ տալ վերջնիս մտնել նոր ամուսնութիւն։

Նոյն օրը Սինոդը լսեց Ղարաբաղի Կոնսիստորիայի յայտարարութիւնը գրուած յունվար 15-ին № 44 Աղդաշ

աւանի աղօթատան շինութեան առթիւ, որ հայ-թրքական ընդհարումների պատճառով Աղդաշի հայ ժողովուրդը ցրված է այլ տեղեր, իսկ Սամսոն Դեանջեցեանը, որ խոստացել էր իր ծախքով շինել աղօթատունը՝ սպանված է, խնդրում է կարճել այդ գործը, որոշեց կարճել։

Նոյն օրը Սինոդը մերժեց Երևան քաղաքի ս. Սարգիս եկեղեցու ծխատէր քահանաների խնդիրը՝ ս. Լուսաւորիչ եկեղեցին տեղափոխուելու մասին, պատուիրելով վիճ. Կոնսիստորիային շրջաբերականով յայտարարել բոլոր քահանաներին, որ նրանք կարող են և պարտաւոր են իրանց ծխականների բոլոր օրինակատարութիւնները կատարել այլ եկեղեցիներում ըստ ցանկութեան ծխականների և ծխականների խնդրանքը պատարագել բացի տէրունական և մեծ տօնական օրերից, երբ պատարագիչ է լինելու եկեղեցու հերթական քահանան։

Փետրվարի 15-ին Սինոդը որոշեց Գէորգևսկ քաղաքից ստացված եկեղեցական անօթների և զգեստների կապոցն ուղարկել Երևանի Փոխ-թեմակալին կողոպտված եկեղեցիների վրայ մատնադրելու։

Նոյն օրը Սինոդը ըստ հեռագրական հրամանի Վեհափառ Հայրապետի, Բենիկ վարդապետի փոխարէն կարգեց քննիչ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանին Տփխիսի Կոնսիստորիայի ծառայողների զեղծումների մասին։

Փետրվարի 17-ին Սինոդը որոշեց տալ Տփխիսի Էջմիածնապատկան կալուածների կառավարիչ Եփրեմ վարդապետ Սուքիասեանին օրինասահման հաւատարմագիր։

Փետրվարի 20-ին Սինոդը որոշեց պայմանաւորուել գիւղատնտես Կ. Մ.-Շահնազարեանի հետ 5 տարի ժամանակաւ տարեկան 2000 ռուբլի ռոճկով Էջմիածնապատկան վարելահողերը, այգիներն ու ադարակը շահագործելու և բարեկարգելու համար։

Փետրվարի 22-ին Սինոդը պատուիրեց Երևանայ Կոնսիստորիային ի հաշիւ եկեղեցիների փաստաբան վարձել

և քաղաքացիական դատ բանալ եկեղեցիների դրամների և զարդու անօթեղէնների կողոպտողների դէմ, թարգմանելով ուղարկել Երևանայ Գեներալ-Նահանգապետին կողոպտված եկեղեցիների և գոյքերի ցուցակը կարևոր զեկուցումների հետ, որ աջակցութիւն ցոյց տայ եկեղեցիների գոյքը կողոպտված եկեղեցիներին վերադարձնելու, և յանցաւորներին քրէական դատի ենթարկել ըստ օրինի պատերազմական դրութեան, և նոյն զեկուցումների ու ցուցակների թարգմանութիւնն ուղարկելով Տ. փոխարքային խնդրել ձեռնարկել ամենակարուկ միջոցի դադարեցնելու զինուած թուրքերի ձեռքով անպաշտպան եկեղեցիների և սրբազան անօթների կողոպտումն Երևանի նահանգում և այլ տեղերում։

Նոյն օրը Սինոդը որոշեց իսպառ կուրութեան պատճառով դադարեցնել քահանայագործութիւնից Տփխիսի ս. Կարապետ եկեղեցու Սիմէօն քահ. Աբրահամեանցին, յանձնել նրա ծուխը այլ քահանայի, որ արդեանց $^2/_3$ մասը պարտաւոր է յանձնել Սիմէօն քահանային։

Նոյն օրը Սինոդը որոշեց ի նկատի ունենալով Երևանի ս. Լուսաւորիչ եկեղեցու ա. քահանայ Գրիգոր Սուքիասեանցի զղջումն և Երևանի Փոխ-թեմական Կարապետ վարդապետի ներումն, գործը կարճել և Գրիգոր ա. քահանայից պահանջել քննիչ Մխիթար վարդապետի ճանապարհի և սննդեան ծախքը։

Նոյն օրը Սինոդը որոշեց Ճալէթու վանքի նախկին վանահայր Թադէոս վարդապետ Նիկողայոսեանին կարգել Տեսուչ ս. Եղիշէ Առաքելոյ ուխտատեղու վրայ։

Նոյն օրը Սինոդը որոշեց յանձնարարել Թեմական առաջնորդներին ըստ 1176 և 1181 յօդ. IX. մ. XI. հատ. անշուշտ այցելել իրանց հօտին և ուսումնասիրելով եկեղեցիների, վանքերի, կալուածների վիճակը, վերաքննելով ստորադրեալ հաստատութիւնների և պաշտօնական անձանց գործողութիւնները այդ բոլորի մասին մանրամասն

զեկուցանել Սինոդին, որպիսի զեկուցումն ցարդ Թեմական առաջնորդներից ոչ ոք չի ներկայացրել։

Նոյն օրը Սինոդը թոյլ տուեց Զամդուրա գիւղի Հրաչեա Պողոսեան Նիկողայոսեանին ամուսնանալ Շողակաթի հետ խնամութեան չորրորդ աստիճանում՝ ի մէջ երկուց խնամութեանց։

Փետրվարի 24-ին որոշեց պահանջել Քիշնևի եկեղեցու Բարսեղ ա. քահ. Ղազանճեանից 73 ր. 24 կ. որ նա իր երեսփոխանական պաշտօնավարութեան ժամանակից (1897 թ.) ցարդ չի վճարել նոյն եկեղեցուն։

Փետրվարի 27-ին Սինոդը որոշեց Վաղարշապատ գիւղի համար հարկաժողով լինել ցանկացողների խնդիրը և հարկաժողով կարգել միաբան Անտոն վարդապետ Վարդազարեանցին։

Նոյն օրը Սինոդը որոշեց ըստ կարգադրութեան Վեհափառ Հայրապետի տալ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանին 150 ռ. բժշկվելու գնալու համար։